# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՇՈՒՐՋ

*Կարեն Վերանյան*

2004թ. հունիսի առաջին կեսին Վրաստանի կառավարությունում իրականացված տնտեսական վերափոխումների արդյունքում միավորված էկոնոմիկայի և ենթակառուցվածքների նախարարությունների ղեկավարումը վստահվեց ռուսաստանյան օլիգարխ Կախա Բենդուկիձեին: Նրա նշանակման փաստի հետ կապված՝ տարբեր լրատվամիջոցներում լուրեր տարածվեցին, թե Բենդուկիձեն «ռուսական մարդ է»:

Նորանշանակ Բենդուկիձեի, որի արմատները, ինչպես հաճախ շեշտում են վրացական աղբյուրները, հրեական են, անվան հետ է կապվում Վրաստանում տնտեսական գերակայություն հռչակված սեփականաշնորհման գործընթացի ակտիվացումը: Հարկ է նշել, որ երկրի ընտրանում դրա իրականացմանը զգալի աջակցություն էր ցույց տալիս հատկապես նախկին վարչապետ Զուրաբ Ժվանիան: Արդյունքում՝ տարվող սեփականաշնորհման գիծը բավական սուր քաղաքական երանգ ստացավ, մասնավորապես, վերջին ամիսներին: Թբիլիսիում արդեն լուրեր էին պտտվում Ժվանիա-Բենդուկիձե տանդեմի ձևավորման և արդյունքում վրացական ընտրանում Սահակաշվիլուն հակակշռող ու միաժամանակ հավասարակշռող ուժի ամրապնդման շուրջ: Դրանով էր, թերևս, պայմանավորված նաև 2004թ. դեկտեմբերյան կառավարական վերադասավորումների արդյունքում Բենդուկիձեին էկոնոմիկայի նախարարից տնտեսական բարեփոխումների հարցերով պետնախարարի պաշտոնին նշանակումը[1]:

2004թ. հուլիսին Բենդուկիձեն ներկայացրեց 2004-2006թթ. սեփականաշնորհման ենթակա օբյեկտների ցանկը: Ընդհանուր առմամբ, մինչև 2007թ. նախատեսվում էր սեփականաշնորհել շուրջ 372 օբյեկտ, որի արդյունքում 2005-2006թթ. երկրի պետբյուջե էր մուտքագրվելու ընդհանուր առմամբ $500-550 մլն: Չնայած Բենդուկիձեի այն հայտարարությանը, թե «նշանակություն չունի՝ ով է գնելու ձեռնարկությունները, ռուս, ամերիկացի կամ այլ գործարարներ, գլխավորն այդ օբյեկտների սեփականաշնորհումից հնարավորինս մեծ գումարներ ձեռք բերելն է»[2], այնուհանդերձ, երկրում ընթացող սեփականա-

[1] Այստեղ հարկ է նշել, որ տնտեսական բարեփոխումների հարցերով պետնախարարը գլխավորապես զբաղվում է Վրաստանում իրականացվող սեփականաշնորհման խնդիրներով: Այսինքն՝ Բենդուկիձեի տեղափոխումը նշանակում էր տնտեսական գործընթացների վրա վերջինիս ազդեցության սահմանափակում:

[2] http://www.civil.ge/rus/print.php?id=5410, «Министр экономики о приватизационной политике», 10 июня 2004г.

շնորհման գործընթացում առավել ակտիվ ու շահագրգիռ են մասնավորապես ռուսաստանյան ընկերությունները:

Այսպես, 2005թ. հունվարի 18-ին ռուսական *«Евразия холдинг»* ընկերությունը հայտարարվեց մանգանի հանքեր վերամշակող *«АО Чиатурмангануми»*-ի բաժնետոմսերի պետական փաթեթի սեփականատեր և էլեկտրաէներգիա ապահովող *«Վարցիխե ՀԷԿ»* ձեռնարկության աճուրդի հաղթող՝ առաջ անցնելով այնպիսի ընկերություններից, ինչպիսիք են ուկրաինական *«Ինտերպայպ»*-ը, բրիտանական *«Moralia Georgia»*-ն, ավստրիական *«Decometal»*-ը: Ռուսական ընկերությունը բաժնետոմսերի փաթեթի համար առաջարկեց $132 մլն: Ըստ վրացական ընդդիմության, ռուսաստանյան վերոնշյալ ընկերության հիմնադիրներից մեկը ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության գեներալ, ազգությամբ աբխազ Թենգիզ Արշբան է: 2005թ. հունվարի 18-ին Թբիլիսիում կայացավ ռուսաստանյան *«Внешторгбанк»*-ի կողմից Վրաստանի *«Միավորված վրացական բանկի»* (վերջինս եկամուտների ծավալով Վրաստանում 4-րդ բանկն է) բաժնետոմսերի փաստացի վերահսկիչ փաթեթի (50%) ձեռքբերման գործարքը: Իսկ ռուսաստանյան *«Dema Computers Limited»* ընկերությունն իր հերթին ձեռք բերեց պետության սեփականությունը հանդիսացող էլեկտրաքարշաշինարարական *«Էլմավալմշենեբելի»* գործարանի 51% բաժնետոմսերի փաթեթը՝ առաջ անցնելով ռուսաստանյան երկու մրցակից՝ *«Динамит»* և *«Радокс»* ընկերություններից: Նախորդ տարվա աշնանը *«Թբիլավիաստրոյ»* ընկերությունը, որոշ տվյալների համաձայն, գնվեց համանուն բաժնետիրական ընկերության կողմից, որն արտադրում է *«Су-25»* տեսակի գրոհային ինքնաթիռներ: Ըստ որոշ աղբյուրների, այդ գործարքի թիկունքում կրկին կանգնած են ռուսաստանյան ընկերությունները:

Վրաստանում սեփականաշնորհման ենթակա օբյեկտների ցանկում տեղ են գտել նաև պետական, ռազմավարական նշանակություն ունեցող ձեռնարկություններ ու գործարաններ, ինչն անուղղակիորեն հակասում է երկրի «Պետական ունեցվածքի սեփականաշնորհման մասին» օրենքին, ըստ որի արգելվում է համապետական նշանակության բնական, ջրային ռեսուրսների, նավամատույցների, երկաթգծերի, հիմնական գազատարների, ավտոճանապարհների, օդանավակայանների թռիչքային հարթակների, պետական փոստային կապի և ռազմավարական նշանակության այլ օբյեկտների սեփականաշնորհումը: Այս երևույթը տարակարծություններ առաջացրեց ոչ միայն երկրի քաղաքական դաշտում, այլև քննադատաբար ընդունվեց հասարակության տարբեր շերտերում: 2005թ. հունվարի վերջին Վրաստանում լեյբորիստների առաջնորդներից Ջոնդի Բագատուրիան մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեց, թե իշխանությունները կորցրել են չափի զգացումը և, ելնելով իրենց սեփական առևտրական շահերից, շարունակում են պետական ունեցվածքի հակասահմանադրական ապօրինի սեփականաշնորհումը և որ պետության առաջին դեմքերը ֆինանսա-

կան անձնական շահագրգռություն ունեն սեփականաշնորհման գործընթացում:

Սեփականաշնորհման գործընթացն առավել խնդրահարույց դարձավ, երբ սկսեցին խոսակցություններ պտտվել սեփականաշնորհման ցանկում այնպիսի ռազմավարական նշանակության օբյեկտների ընդգրկման շուրջ, ինչպիսիք են Բաթումի և Փոթիի նավահանգիստները: Հարկ է նշել, որ վերջիններիս գնման հարցում շահագրգռված է ռուսաստանյան «*Промышленные инвесторы*» ընկերությունը, որն առաջարկում է գործարքի դիմաց վճարել շուրջ $200 մլն: Ինչպես նշում է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, տնտեսական հարցերով փորձագետ Լադո Պապավան *«Civil.ge»*-ին տված հարցազրույցում, «*Երկաթգծի սեփականաշնորհումն առավել անվտանգ է, քան նավահանգիստներինը: Եթե ռուսաստանյան ընկերությունները նավահանգիստների համար ավելի խոշոր գումարներ վճարեն, ես չեմ համաձայնի դրան, քանզի Ռուսաստանը Սև ծովում ունի ընդամենը մեկ նավահանգիստ, իսկ Վրաստանում, սեփականաշնորհման դեպքում, նրա ձեռքում կհայտնվեն նաև վրացական նավահանգիստները*»[1]: Պաշտոնական Թբիլիսին բանակցություններ է վարում *«Газпром»*-ի հետ՝ երկրի հիմնական գազամուղը վերջինիս վաճառելու վերաբերյալ: Գործարքից իրենց դժգոհությունն են արտահայտել թե՛ երկրի ընդդիմությունը, թե՛ խորհրդարանը: Ընդդիմադիրներն այն կարծիքին են, թե նախագծի իրականացման հարցում հատկապես շահագրգռված է Բենդուկիձեն: Մասնավորապես, «Նոր աջեր» կուսակցության առաջնորդ Դավիթ Գամկրելիձեի բնորոշմամբ, «*Այդ մարդուն (Բենդուկիձեին - խմբ.) բոլորովին չի հուզում այնպիսի հարց, ինչպիսին երկրի էներգետիկ անվտանգությունն է: Նա ամեն կերպ փորձում է քարոզել իր ռուս ընկերների շահերը*»: Ռուսաստանյան ընկերության հետ գործարքի կնքմանը կտրականապես դեմ է արտահայտվել նաև իշխանական «Ազգային շարժում» կուսակցության պատգամավորների մի մասը: Վրացի փորձագետների զգալի մասն այն կարծիքին է, թե դա կարող է բացասական ազդեցություն ունենալ թե՛ երկրի էներգետիկ անվտանգության և թե՛ արտաքին քաղաքականության վրա: Ավելին, գործարքի հավանական իրականացումն անմիջականորեն վերաբերում է Վրաստանում ռուս-ամերիկյան հարաբերություններին: Պատահական չէ, որ սույն թվականի մարտի 17-ին Թբիլիսիում կայացած նավթի, գազի, էներգետիկայի և ենթակառուցվածքների հարցերին նվիրված *«GIOGIE-2005»* միջազգային համաժողովում Վրաստանում ԱՄՆ այլևս նախկին դեսպան Ռիչարդ Մայլսը բացասաբար ընդունեց ռուսական ընկերությանը հիմնական գազամուղի հավանական վաճառքի հարցում վրացական կողմի դիրքորոշումը՝ մասնավորապես նշելով, որ «*Միացյալ Նահանգները գտնում է, թե լավ կլինի, եթե Վրաստանը պահպանի այդ գազամուղը, քանի որ դրա վաճառքի դեպքում երկրում մենատիրություն կառաջանա*»: Ակնհայտ է, որ վերոնշյալ գործարքի հավանական իրագործումը կուժեղացնի Վրաստանում ռու-

[1] http://www.civil.ge/rus/print.php?id=5427, Грузия в ожидании «агрессивной приватизации», 24 июня 2004г.

սական տնտեսական ազդեցությունը, ինչն այսօր անմիջականորեն հակասում է հարավ-կովկասյան այդ երկրում ԱՄՆ քաղաքականությանը:

Սակայն չպետք է միանշանակորեն ընդունել պաշտոնական Թբիլիսիի դիրքորոշումն այդ գործարքի իրականացման հարցում: Խնդիրն այն է, որ, ըստ որոշ վերլուծությունների, ամերիկյան ընտրանում վերջերս անվստահություն է ձևավորվել Մ.Սահակաշվիլու հանդեպ: Այս տեսանկյունից գազամուղի վաճառքի հարցը կարելի է դիտարկել ռուս-ամերիկյան հարաբերությունների համատեքստում՝ որպես ԱՄՆ կառավարությանը Վրաստանի ղեկավարության կողմից երկրի դերի կարևորության ընդգծման ու ցուցադրման փորձ, ինչու չէ՝ նաև խնդրին ամերիկյան ներգրավվածության ակտիվացման և դրանով իսկ ռուսական ազդեցության նկատմամբ ճնշումն ուժեղացնելու ուղղությամբ տարվող քաղաքականություն: Չպետք է բացառել նաև այն տարբերակը, որ վրացական ընտրանում փորձում են երկու գերտերությունների շահերի համատեքստում առանձին՝ վրացական քաղաքական գիծ գործադրել: Ավելին, ինչպես վերջերս նշել է Բենդուկիձեն, հիմնական գազամուղի հավանական սեփականաշնորհումը մրցակցության դաշտ կստեղծի Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի նախագծի համար: Ամեն դեպքում, Ռուսաստանի խոշորագույն *«Газпром»* ընկերության հետ հավանական գործարքի շուրջ առկա շահարկումներն իսկ դրական չեն անդրադառնում վրաց-ամերիկյան հետագա հարաբերությունների վրա:

Ընդհանրապես, Վրաստանում ներկայում տարվող սեփականաշնորհման բաց դռների քաղաքականությունը ռուս-վրացական հարաբերություններում, թերևս, էական խաղաթուղթ կարող է ընձեռել ռուսական կողմին: Տպավորություն է ստեղծվում, թե Վրաստանի քաղաքական կախվածությունն անցել է Միացյալ Նահանգներին, իսկ երկրի տնտեսական գոտին վերահսկվում է ռուսական կողմից: Ակնհայտ է, որ Վրաստանում ռուսական կողմը վարում է տնտեսական ակտիվ ներթափանցման քաղաքականություն՝ փորձելով վրացական ներկա քաղաքական վերնախավում իր ազդեցության սահմանափակվածությունը փոխհատուցել տնտեսական ակտիվների ձեռքբերմամբ, և այս համատեքստում, անշուշտ, չպետք է թերագնահատել Բենդուկիձեի՝ որպես քաղաքական ազդեցիկ կերպարի դերը[1]:

Սակայն, մյուս կողմից, պետք է հաշվի առնել նաև ԱՄՆ կառավարության հարավ-կովկասյան քաղաքականությունում Վրաստանի ունեցած կարևոր ռազմավարական ու քաղաքական նշանակությունը: Այդ համատեքստում պաշտոնական Վաշինգտոնը, թերևս, չհամակերպվի Վրաստանում ռուսական տնտեսական գերակայության հաստատման հետ:

[1] Սակայն, մյուս կողմից չպետք է բացառել, որ Բենդուկիձեն, Վրաստանում տարվող մոսկովյան տնտեսական գծից բացի, միաժամանակ առաջ տանի ոչ ռուսական, ինչու չէ՝ նաև հակառուսական տնտեսական քաղաքականություն: Ստեղծվում է մի պատկեր, որտեղ գործ ունենք Վրաստանում ռուսական տնտեսական լծակների ամրապնդման քաղաքականության հետ, որն, ըստ էության, այդքան էլ ռուսական չէ: Սա նույնպես սցենարներից մեկն է, որը, թերևս, նույնպես չպետք է բացառել: